# ՆՈՐ ԳՐՔԵՐ

**Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—«Հայ ժողովրդական հանելուկներ», ԳԱ** *հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 15000, 390 էջ, գինը՝ 1 ռ. 45 կ.*

*Այս աշխատությունը հայ ժողովրդական հանելուկների գիտական ժողովածու է։ Ունի ծանոթագրություններ, հանելուկների լուծման տարբերակների, անվանական, առարկայական, տարածման վայրերի ցանկեր, սկզբնաղբյուրների լիակատար ցուցակ և փոխաբերությունների ու սիմվոլների բառարան։*

**Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ — «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը»,** *ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 1000, գինը՝ 73 կ.*

*Մենագրության մեջ Մ. Խորենացու ցուցումների հիման վրա վերականգնվում է նրա «Հայոց պատմության» ժամանակագրական սինխրոնիկ աղյուսակը, ուսումնասիրվում այդ աղյուսակի առանձնահատկությունները, ինչպես և շեղումները ստույգ ժամանակագրությունից։*

*Գիրքն ունի հավելվածներ, աղյուսակների ցանկ և ռուսերեն լեզվով ամփոփում։*

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ — «Երկերի ժողովածու»,** *հատ. երրորդ, ԳԱ հրատարակչություն, 1965 թ., տպաքանակը՝ 11000, 374 էջ, գինը՝ 1 ռ. 26 կ.*

*Ե. Չարենցի Երկերի երրորդ հատորում զետեղված են «Պոեզոզուռնա» պոեմը, քառյակները, պոետի զանազան բանաստեղծությունները և թարգմանությունները։ Հատորն ունի ծանոթագրություններ և տեքստային տարբերություններ։*